ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/63 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» հուլիսի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Մայիլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թ. մայիսի 21-ի N 834-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ելնելով անհրաժեշտությունից Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 2019 թվականի նոյեմբերի 13-ին կնքված թիվ ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/63 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանել՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:

1.1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման նոր օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.3 Հաստատել պայմանաագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման նոր ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են

բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3<br>Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011012979<br>ՀՎՀՀ 02698732 | «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1 նրբ. տ 8/Ա,<br>հեռ.՝ 093743040,<br>էլ. փոստ՝ artmashin@mail.ru<br>«Արդշինբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2470100564110000<br>ՀՎՀՀ 02576479 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝<br>_______________ Վ. Գասպարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>_______________ Ռ. Մայիլյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*« 10 » « 07 » 2020 թ. կնքված*
*N 1 համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ (ՍԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումը | Աշխատանքների կատարման ժամկետ* | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ա- Նախապատրաստական աշխատանքներ | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրացուցային օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում |
| 2 | Գ-Հուշարձանի ամրակայում | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում |
| | Ընդամենը | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում |

** Աշխատանքների կատարման ժամանակահատվածը հաշվարկվում է համապատասխան տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու օրվանից: Աշխատանքները ավարտման ժամկետը չի կարող լինել ավելի ուշ, քան ս.թ դեկտեմբերի 1-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____________ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____________ Ռ. Մայիլյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 2*
*« 10 » « 07 » 2020 թ. կնքված*
*N 1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ ըստ ամիսների, ընդ որում. | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45451600-3 | Վերականգնողական աշխատանքներ | 11968300 | 11968300 | 11968300 | 14960400 | 14960400 | 14960400 | 14960400 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ռ. Մայիլյան
(ստորագրություն)
Կ.Տ